

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-21/3-1»**

«20» հունվարի 2021թ.

ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գ. Միրիջանյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության

իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4548531 (չորս միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:¹⁸

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:²⁰

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

¹⁸ Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

¹⁹ Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

²⁰ Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:²²

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

²¹Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

²²Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:²⁵

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ
Հարկադիր կատարումն ապահովող
ծառայություն

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ք.Երևան, Ռուբինյանց 31

²⁵ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչության

Հ/Հ 900011288025

ՀՎՀՀ 01223338




(ստորագրություն)

Կ.Տ.

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Հ/Հ 1510012745550100

ՀՎՀՀ 00873228



(ստորագրություն)

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն և ժամկետը
4	50111130/545	ներկայացված են ստորև	դրամ	300000	1	ներկայացված են ստորև
7	50111130/548	ներկայացված են ստորև	դրամ	4248531	1	ներկայացված են ստորև

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փոխալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

h/h	SU-1 (տեխնիկական գննման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	4-րդ չափ.	7-րդ չափ.
		MERCEDES-BENZ S550 /2008թ./1 հատ	BYD F3 1.5 /2013թ. 2014թ. , 2015թ./ 27 հատ
		6	9
1	2		
SU-1 ներառվող ծառայությունների անվանումները			
1	Բռնկման համակարգի ստուգում	998.90	883.35
2	Սառեցման համակարգի ստուգում	998.90	883.35
3	Յուղման համակարգի ստուգում	998.90	883.35
4	Արտաձման համակարգի ստուգում	998.90	883.35
5	Կցորդման համակարգի ստուգում	998.90	883.35
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	998.90	883.35
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	998.90	883.35
8	Կրադանային փոխանցման տուփի ստուգում	998.90	883.35
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	998.90	
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	998.90	883.35
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	998.90	883.35
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	998.90	883.35
13	ABS համակարգի ստուգում	998.90	883.35
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	998.90	883.35
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	998.90	883.35
16	Թափքի վիճակի ստուգում	998.90	883.35
17	Տարբեր ազդեցությունների յուղերի որակի և մակարդակների ստուգում	998.90	883.35
SU-2 ներառվող ծառայությունների անվանումները			
1. Շարժիչ			
1	Շարժիչի հանում և տեղադրում	69,923.13	22,083.70
2	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	49,945.09	30,917.18
3	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	11,986.82	4,416.74
4	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	14,983.53	6,183.44
5	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	19,978.04	8,833.48
6	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	39,956.07	13,250.22
7	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	4,994.51	4,416.74
8	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	4,994.51	4,416.74
9	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	2,497.25	2,650.04
10	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	1,997.80	1,766.70

11	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	4,994.51	4,416.74
12	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	14,983.53	4,416.74
13	Ծնկաձև լիսեռի հղկում	29,967.05	17,666.96
14	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	29,967.05	8,833.48
15	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	4,994.51	4,416.74
16	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	4,994.51	4,416.74
17	Ծնկաձև լիսեռի ուղղում	14,983.53	13,250.22
18	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	14,983.53	8,833.48
19	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	19,978.04	13,250.22
20	Շարժիչի բլոկի փոխարինում	19,978.04	17,666.96
21	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	9,989.02	8,833.48
22	Մխոցի փոխարինում 1 հատ	4,994.51	4,416.74
23	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	9,989.02	8,833.48
24	Բաշխիչ լիսեռի ակնոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	4,994.51	4,416.74
25	Բաշխիչ լիսեռի խտավուկի փոխարինում	4,994.51	4,416.74
26	Փոկանիվի փոխարինում	4,994.51	4,416.74
27	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	2,996.71	2,650.04
28	Շարժիչի շղթայի փոխարինում	29,967.05	13,250.22
29	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	4,994.51	4,416.74
30	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	4,994.51	4,416.74
31	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	9,989.02	8,833.48
32	Շարժիչի յուղի մղիչի փոխանակում	24,972.55	8,833.48
33	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	14,983.53	13,250.22
34	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	4,994.51	4,416.74
35	Յուղի ծորակի փոխարինում	4,994.51	4,416.74
36	Օդաքաշակ փողրակի փոխարինում	4,994.51	4,416.74
37	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	29,967.05	8,833.48
38	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	14,983.53	13,250.22
39	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	19,978.04	17,666.96
40	Շարժիչի կափույրի փոխարինում	9,989.02	8,833.48
41	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	9,989.02	8,833.48
42	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	9,989.02	8,833.48
43	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	9,989.02	8,833.48
44	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	9,989.02	8,833.48
45	Ատամնանիվի փոխարինում	4,994.51	4,416.74
46	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	4,994.51	4,416.74
47	Սովսարիկի փոխարինում 1 կ-տ	9,989.02	8,833.48

48	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	14,983.53	13,250.22
49	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	4,994.51	4,416.74
50	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	2,996.71	2,650.04
51	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	9,989.02	8,833.48
52	Շարժիչի յուղի արանքաչափի (ՔՅՏ) իրանի փոխարինում	4,994.51	4,416.74
53	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	9,989.02	8,833.48
54	Շարժիչի գամասեղի փոխարինում	2,996.71	2,650.04
55	Գլխիկի հեղույսի փոխարինում	2,996.71	2,650.04
56	Ծնկածն լիսեռի հեղույսի փոխարինում	2,996.71	2,650.04
57	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում և տեղադրում	9,989.02	8,833.48
58	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	14,983.53	13,250.22
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
59	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1,997.80	1,766.70
60	Ավտոմեքենայի յուղում	1,997.80	1,766.70
61	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	7,991.21	7,066.78
62	Յուղի պոմպի փոխարինում	24,972.55	22,083.70
63	Յուղի ռադիատորի փոխարինում	29,967.05	8,833.48
64	Յուղի ռադիատորի նորոգում	4,994.51	4,416.74
65	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	14,983.53	13,250.22
66	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	9,989.02	8,833.48
67	Վառուցքի մոմի փոխարինում 1 կ-տ	4,994.51	2,650.04
68	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	9,989.02	8,833.48
69	Օդի զտիչի փոխարինում	998.90	883.35
70	Սրահի օդի զտիչի փոխարինում	998.90	883.35
71	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,994.51	4,416.74
72	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	998.90	883.35
73	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	3,995.61	3,533.39
74	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	3,995.61	3,533.39
75	Բոցամուղի կողավորում	9,989.02	8,833.48
76	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	4,994.51	4,416.74
77	Բենզամուղիչի փոխարինում	9,989.02	8,833.48
78	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	4,994.51	4,416.74
79	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	9,989.02	8,833.48
80	Բռնկման կարգավորում	4,994.51	4,416.74
81	CO կարգավորում	4,994.51	4,416.74
82	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	9,989.02	8,833.48

83	Ղեկավարման բյուրի վերանորոգում	14,983.53	13,250.22
84	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,994.51	4,416.74
85	Վառելիքի բաքի մաքրում	9,989.02	8,833.48
86	Օդի ծախսի տվիչի փոխարինում	9,989.02	8,833.48
87	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	9,989.02	8,833.48
88	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	4,994.51	4,416.74
89	Բենզոբաքի բենզամոդիչի ցանցի փոխարինում	4,994.51	4,416.74
90	Բենզոբաքի բենզամոդիչի ցանցի մաքրում	1,997.80	1,766.70
91	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	4,994.51	4,416.74
92	Տվիչի փոխարինում	4,994.51	4,416.74
	3. Սառեցման և արտածման համակարգ		
93	Հովհարի հանում և տեղադրում կամ փոխարինում	9,989.02	8,833.48
94	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,994.51	4,416.74
95	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	9,989.02	8,833.48
96	Ռադիատորի նորոգում	19,978.04	17,666.96
97	Շերտափեղկի փոխարինում	9,989.02	8,833.48
98	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	4,994.51	4,416.74
99	Ընդարձակող բաքի փոխարինում	2,996.71	2,650.04
100	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1,997.80	1,766.70
101	Ջրի ծորակի փոխարինում	4,994.51	4,416.74
102	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	4,994.51	4,416.74
103	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	9,989.02	8,833.48
104	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ներառյալ	14,983.53	13,250.22
105	Վառարանի ռադիատորի նորոգում	9,989.02	8,833.48
106	Վառարանի շարժիչի փոխարինում	9,989.02	8,833.48
107	Թերմոստատի փոխարինում	12,985.72	7,066.78
108	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	9,989.02	8,833.48
109	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	4,994.51	4,416.74
110	Գեներատորի փոկի փոխարինում	9,989.02	4,416.74
111	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	4,994.51	4,416.74
112	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,994.51	4,416.74
113	Խլարարի I հատ խողովակի փոխարինում	4,994.51	4,416.74
114	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	998.90	883.35
115	Խլարարի ներդիրի փոխարինում	4,994.51	4,416.74
116	Խլարարի կախոցի փոխարինում	1,997.80	1,766.70
117	Հովացման հեղուկի փոխարինում	2,996.71	2,650.04
	4. Կցորդում և ՓՏ		

118	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	14,983.53	13,250.22
119	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	14,983.53	13,250.22
120	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	14,983.53	13,250.22
121	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,994.51	4,416.74
122	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,994.51	4,416.74
123	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,994.51	4,416.74
124	Կցորդման երկժանիի փոխարինում	9,989.02	8,833.48
125	ՓՏ-ի հիմնական նորոգում	0.00	26,500.44
126	ԱՓՏ-ի հիմնական նորոգում	59,934.11	26,500.44
127	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	14,983.53	13,250.22
128	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	4,994.51	4,416.74
129	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	4,994.51	4,416.74
130	ՓՏ-ի հանում և տեղադրում	14,983.53	13,250.22
131	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	14,983.53	13,250.22
132	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	9,989.02	8,833.48
133	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	9,989.02	8,833.48
134	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	9,989.02	8,833.48
135	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	9,989.02	8,833.48
136	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	9,989.02	8,833.48
137	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	14,983.53	13,250.22
138	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	9,989.02	8,833.48
139	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	7,991.21	7,066.78
140	ՓՏ-ի յուղի փոխարինում	4,994.51	4,416.74
141	ԱՓՏ-ի յուղի և գտիչի փոխարինում	4,994.51	4,416.74
142	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	19,978.04	17,666.96
143	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	19,978.04	17,666.96
144	Վազբաչափի շարժաբերի փոխարինում	4,994.51	4,416.74
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
145	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	9,989.02	8,833.48
146	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	9,989.02	8,833.48
147	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	9,989.02	8,833.48
148	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	9,989.02	8,833.48
149	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	9,989.02	8,833.48
150	Բաշխիչ տուփի դիֆերանցման փոխարինում	9,989.02	8,833.48
151	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	9,989.02	8,833.48
152	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	9,989.02	8,833.48

153	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	9,989.02	8,833.48
154	Բաշխիչ տուփի երկժանի փոխարինում	9,989.02	8,833.48
155	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	9,989.02	8,833.48
156	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	4,994.51	4,416.74
157	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	4,994.51	4,416.74
158	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,994.51	4,416.74
159	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	4,994.51	4,416.74
160	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	9,989.02	8,833.48
161	Տվիչի փոխարինում	4,994.51	4,416.74
162	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	4,994.51	4,416.74
163	Կարդանային լիսեռի միջին կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,994.51	4,416.74
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
